զչարականն ասէին. ի Ե ժամու աւուրն՝ ապա ելաք յեկեղեցոյն։ Եւ կեցեալ անդ կաթողիկոսն և պատարագ առնէր ի կիրակէքն և Եղիազար վարդապետն ծանուցանէր ժողովրդեան թէ Զկաթողիկոսն մեր մարմնաւոր աչօք տեսեալ եմք, և ո՛րչափ պարտիմք որ զԱստուծոյ բարին գիտենամք. քանզի նստեալ սա յաթոռ Սուրբ Լուսաւորչին, և այժմ սայ է լուսաւորիչ. ապա հաւատալ պարտիմք և սորա արժանեացն ընծայ և պատիւ առնել։ Եւ ընդ բանիս գային յամենայն կողմանց ժողովուրդք և ինքն մուծանէր զնոսա ի կաթողիկոսն։ Եւ յաւուր գալոյ կաթողիկոսին նստոյց զնա ի մեծ խուցն, զոր ինքն ի պատիւ կաթողիկոսին յառաջագոյն շինել ետուր գեղեցիկ և մեծամեծ խուցք և տեղք նստելոյ՝ յամենայն եկեղեցիսն. և առաջի օրն ի Սուրբ Գէորգ անդ նստոյց և որչափ մեծամեծք և իշխանք կային՝ անդ նստան ընդ կաթողիկոսին ի հացկերոյթ։ Եւ նոյն օրն վարդապետն տարեալ ի ներս և համբուրեաց զոտս կաթողիկոսին և կաթողիկոսն շնորհակալեցաւ և ասաց թէ Տուն քո քեզ շնորհաւոր լիցի. և նստան։ Եւ աւուրս խարճ հացին վարդապետն տեսաւ ի քսակէն իւրմէ։ Եւ յետ Դ Ե շաբաթու ելեալ գնացին ի Սուրբ Լուսաւորիչ. նոյնպէս և անդ արարգայն պատիւն և զմեծարանս, և Դ Ե շաբաթու եկեալ ի յԱստուածածին։ Եւ Եղիազար վարդապետն զըզուեալ ի քաղաքացւոց և ի վարդապետաց կաթողիկոսին, զի յառ և տուր քաղաքիս խառնեցան նոքա, և վասն այնորիկ ել թէ Կ'երթամ. և զվանքն յանձեալ էր ի միաբանքն, որ կոչի Բարձրահայեաց Սուրբ Աստուածածին. և միաբանքն զըզուեալ թէ վասն է՞ր ոչ գաս. վասն որոյ ել և գնաց։ Նոյնպէս և վարդապետքն, որ եկեալ էս էին ընդ կաթողիկոսին, զայս էս խնդրէին թէ Նա երթայ։ Եւ ել նա գնաց իւրով կամաւն՝ յեկեղեցիսն մի մի շաբաթ դաս-